Մամլո ասուլիս Ադրբեջանի ներկայացուցչությունում

Երեկ, մայիսի 7-ին, ժամը 16-ից 17-ը Մոսկվայի Ադրբեջանական ներկայացուցչության շենքում տեղի է ունեցել Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահ Էմիրա Կաֆարովայի եւ ժողովրդական պատգամավոր, Ադրբեջանի կոմկուսի գաղափարախոսական բաժնի վարիչ Ռահիմ Աղաեւի մամլո ասուլիսը: Ըստ մեր թղթակցի հաղորդած տեղեկությունների, ադրբեջանական կողմը, ինչպես սպասվում էր, բացասաբար է մեկնաբանել Հայաստանի խորհրդարանի ընդունած որոշումը: Կաֆարովան հայտարարել է, թե արդեն չորս տարի է հայ գրոհայինները Ադրբեջանի դեմ տանում են չհայտարարված պատերազմ: Հայաստանում ոչ մի ադրբեջանցի չկա, բայց Ադրբեջանում ապրում են 200 հազար հայեր: Եւ որպեսզի այդ բնակչության անվտանգությունն ապահովվի, հայտարարվել է անձնագրային ռեժիմի ստեղծում: Գետաշենն ու Մարտունաշենը ոչ թե ադրբեջանցիներն են քանդել, այլ հայ գրոհայինները:

Կաֆարովան նշել է նաեւ, որ անձնագրային ռեժիմը արդեն արդյունք է տվել եւ կրակոցներ այլեւս չկան: Իսկ Լեւոն Տեր-Պետրոսյանի հայտարարությունը համարվել է պրովոկացիոն: Ադրբեջանի Գերագույն խորհուրդը համարում է, որ դա Ադրբեջանի ներքին գործերին ուղիղ միջամտություն է: Այն հարցին, թե ինչու չեն լրագրողներին թողնում Ղարաբաղ, տրվել է հետեւյալ պատասխանը. *«Վախենում ենք, այդ լրագրողների անվտանգության համար, հայ գրոհայինները կարող են նրանց սպանել»:*

Արմենպրեսի թղթակցի այն հարցին, թե ռեզիոնում առկա՞ է արդյոք երրորդ ուժը, պատասխանել են. *«Այո, դրանք հայ գրոհայիններն են»:* Իսկ Մարտունաշենը ոչ թե ադրբեջանցի օմոնականներն են հրդեհել, այլ հայ գրոհայինները:

Ղարաբաղի հիմնահարցի լուծման ուղին, ադրբեջանական կողմը տեսնում է միայն օրակարգից այդ հարցի լրիվ հանման եւ հայկական զյուղերը հայ գրոհայիններից մաքրելու մեջ: Կաֆարովան հայտարարել է նաեւ, որ Ադրբեջանի Գերագույն խորհուրդը համակ-բողոքով կդիմի ՄԱԿ-ին, որպեսզի նա չխառնվի ինքնինքյան Ադրբեջանի ներքին գործերին եւ եթե Հայաստանի պահանջով ուղարկվեն միջազգային դիտորդներ, ապա նրանց չեն թողնի մտնել հանրապետության տարածք:

Մամլո ասուլիսում նշվել է նաեւ, որ 1990թ. ընթացքում սպանվել է 46 ադրբեջանցի, իսկ 1991-ին՝ 61: 1991 թվականի ընթացքում ադրբեջանցիների վրա կատարվել են 304 հարձակումներ:

Մամլո ասուլիսից հետո (երեւի թե իրենց փորձից ելնելով) ադրբեջանցիները միմյանց հարցնում էին, թե հետաքրքիր է՝ սուր հարցեր տալու համար հայերն ինչքան են վճարում ասուլիսներին ներկա լրագրողներին:

□